ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեման՝** Պատմության ուսուցման առանձնահատկությունները չտեսնող երեխաներին դասավանդելիս

**Հետազոտող ուսուցիչ՝** Արամ Ղանդիլյան

Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան ՏԽՈՒԵ թիվ 14 հատուկ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 2

Գլուխ 1. Պատմության ուսուցման առանձնահատկությունները չտեսնող երեխաներին դասավանդելիս ---------- 4

Գլուխ 2. Չտեսնող նշանավոր մարդկանց գործունեությունը, չտեսնողների ստեղծագործությունները որպես տեսողության խնդիրներ ունեցող երեխաների ուսուցման լրացուցիչ խթան ----------11

Եզրակացություն ----------21

Օգտագործված գրականության ցանկ ---------- 22

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդիկ կյանքի այս կամ այն հատվածում զրկվելով տեսողությունից, այնուամենայնիվ հոգու արիության և կյանքի համառության շնորհիվ կարողացել են հասնել գիտության, արվեստի ու գրականության բարձունքներին:

Ձիրքը, ունակությունը տրվում են բնությունից: Տեսողությունն օգնում է դրանց զարգացմանը: Իսկ տեսողության բացակայությունը հաղթահարելու համար մարդը, հատկապես տաղանդավոր մարդը ստիպված է զորակոչի ենթարկել իր ներքին ուժերը, դրսևորել բացառիկ կամքի ուժ, որն այլ կերպ կոչում ենք ոգու արիություն:

Կուրությունը չարիք է, որն ուղեկցում է բազում մարդկանց ամբողջ կյանքի ընթացքում: Բայց լիարժեք կրթություն ստանալու դեպքում չտեսնողը կկարողանա ազատվել անլիարժեքության զգացողությունից, ավելորդ բարդույթներից, հարգանքի արժանանալ հասարակության մեջ, իր տեղը գտնել կյանքում:

Ցավոք, հասարակությունը լիարժեք պատկերացում չունի չտեսնող մարդու հնարավորությունների սահմանների մասին: Մինչև օրս լիարժեք լուսաբանված չեն չտեսնող գիտնականների, գրողների, բանաստեղծների, արվեստագետների, պետական և հասարակական գործիչների կյանքն ու գործունեությունը, պատշաճ ներկայացված չեն չտեսնող ստեղծագործողների բանաստեղծությունները, պոեմները, քառյակները, առակները, պատմվածքները, վեպերը, երգերը, աֆորիզմները, հանելուկները, երգիծական ստեղծագործությունները, որոնք ըստ էության կարող են խթան հանդիսանալ հայրենասեր, պատվախնդիր, անձնուրաց, կամային հատկանիշ ունեցող քաղաքացի ձևավորելու հարցում:

Ահա սրանում է կայանում մեր ներկայացվելիք թեմայի արդիականությունը, որ պահանջում է խորը և լիակատար ուսումնասիրություններ ու վերլուծություններ:

Այս թեման ներկայացնելիս մեր առջև դնում ենք հետևյալ նպատակներն ու խնդիրները.

ա. Ձևավորել հայրենասեր քաղաքացի, ով կհպարտանա մեր ժողովրդի պատմական նվաճումներով ու մշակութային ձեռքբերումներով:

բ. Ձևավորել գիտելիքներով օժտված անձ, ով պատկերացում կկազմի պատմական ու մշակութային գործիչների կյանքի ու գործունեության մասին:

գ. Հասնել նրան, որ սովորողը անմնացորդ սիրո և հարգանքի խոր զգացում ունենա մեր հայրենիքի, պատմության, լեզվի և մշակույթի հանդեպ:

դ. Պատկերացում կազմելով չտեսնող նշանավոր մարդկանց մասին, չտեսնող երեխաների մոտ զարգացնել վստահություն, համարձակություն, արժանապատվություն, իրենց հնարավորությունների ճիշտ գնահատում:

ե. Պատմության դասանյութերը համեմել չտեսնող գրողների և բանաստեղծ - ների ստեղծագործություններով:

զ. Հաճախակի անցկացնել գրքի քննարկումներ, անցկացնել գրական-գեղար - վեստական ցերեկույթներ:

է. Խրախուսել սովորողների ընթերցասիրությունը և նրանց ուղղորդել գրքերի ճիշտ ընտրության հարցում:

## ԳԼՈՒԽ 1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉՏԵՍՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴԱՍԱՎԱՆԴԵԼԻՍ

1950-ական թվականներին աշխարհավարման ձգտող ուժերից մեկի իշխանությունների կողմից այսպիսի հրահանգ էր տրվել.

«Ժողովուրդն առանց պատմության նույնն է, ինչ երեխան առանց ծնողների: Նա ամեն ինչ պետք է սկսի սկզբից: Եվ այդ խմորից կարելի է ուզածդ բանը թխել: Զրկե՛ք նրանց անցյալից, ազգային ոգուց: Բացահայտորեն մի՛ քանդեք նրանց պատմական հուշարձանները, բայց և մի՛ վերանորոգեք: Թողեք, որ ժամանակը քանդի դրանք: Այդպես կարելի է ամբողջ ժողովուրդներ դիմազրկել: Սկզբում դրանք զրկվում են պատմությունից և ավանդույթներից, ապա մենք ձևավորում ենք մեր ցանկացածով, մեզ ձեռնտու կերպով»[1]:

Այսպիսով, եթե չենք ուզում դիմազրկվել, տարրալուծվել, այլ ուզում ենք պահպանել մեր ինքնատիպ տեսակը, պետք է լավ իմանանք մեր պատմությունն ու ավանդույթները:

Սիրել մեր ժողովրդի լեզուն, պատմությունը, մշակույթը, եկեղեցին, յուրաքանչյուր հայ մարդու դավանանքը պետք է լինի: Յուրաքանչյուր հայ պետք է իմանա և հարգի իր ազգային արժեհամակարգը:

Չտեսնող երեխաների հետ ուսուցիչը պետք է աշխատի նվիրվածությամբ, լինի համբերատար ու սիրալիր: Չպետք է ունենա սառը, անբարյացկամ տոն:

«Սխալված աշակերտի վրա մի բարկանա, որովհետև հիվանդն իր կամքով չի հիվանդանում»,- գրել է հինգերորդ դարի իմաստասեր Եզնիկ Կողբացին[2]:

Դպրոցը, իրավամբ, հանդիսանում է ընտանիքը հասարակության հետ կապող կարևորագույն օղակը, որը հայելու նման արտացոլում է ընտանեկան դաստիարակության բոլոր լավ ու վատ կողմերը: Ուսուցիչը պետք է նկատի ունենա, որ չտեսնող երեխաների մեծ մասը գալիս են այնպիսի ընտանիքներից, որտեղ չտեսնող երեխաների հանդեպ ծնողների մոտ առկա են անվստահություն, հուսահատություն, հոռետեսություն վաղվա օրվա նկատմամբ, իսկ որոշ ծնողների մոտ՝ ինչո՞ւ չէ, պարզա պես

---

[1] Խ. Դաղայան._«Հայերը և Բաքուն»: Երևան 2006 թ., էջ 4:

[2] Ա. Միքայելյան, Մ. Մարդումյան._«Մտքի հրավառություն»: Ե. 2012 թ., էջ 26:

անտարբերություն: Ահա անձամբ ես սկսում եմ ծնողների հետ համբերատար զրույցներից: Ի դեպ , ծնողներին եմ ներկայանում փաստական հարուստ նյութերով: Ամենից հաճախ ներկայացնում եմ հետևյալը. 16-րդ դարի ֆլամանդացի նկարիչ Պիտեր Բրեյգել Ավագը մի հայտնի նկար ունի, որ կոչվում է «Կույրերը»: Նրանում պատկերված է, որ վեց աղքատ չտեսնողներ, միմյանց բռնած, անցնում են գյուղի միջով: Նրանք չգիտեն, որ կողքներին զառիթափ է: Ահա արդեն ներքև է ընկնում առաջինը: Մյուսների դեմքներին տագնապ է: Շուրջը լռություն է, խաղաղություն: Միայն այդ վեց չտեսնողներն են դժբախտության մեջ: Այդ նկարը, որ հետազոտող-ները համարում են հեղինակի ամենամռայլ գործը, ընկալվում է որպես թշվառու- թյան դառը խորհրդանիշ:

Այո կուրությունը ողբերգություն է, բայց ուսուցիչը պետք է հասնի նրան, որ իր չտեսնող աշակերտները և հավասարապես նաև նրանց ծնողները գիտակցեն, որ «զառիթափից» գահավիժում են միայն թույլերն ու կամազուրկները:

Ցավոք, հենց սկզբից մենք հանդիպում ենք լուրջ հիմնախնդրի: Դա բրայլյան համակարգով դասագրքերի խնդիրն է: 1957 թվականից Հայաստանի Կույրերի միավորման ֆինանսական միջոցներով տպագրվում էին բրայլյան բոլոր դասա-գրքերը: Սակայն 1991 թվականից հետո, երբ Հայաստանի Կույրերի միավորումը կանգնեց ֆինանսական լուրջ դժվարությունների առջև, դադարեց բրայլյան դասա-գրքերի տպագրության ֆինանսավորումը: Իսկ բրայլյան տպագրության գրքերը բավականին թանկ արժեն: Դա կախված է բրայլյան գրքերի առանձնահատկությունից, որը պահանջում է մեծ ծավալ, շատ թերթեր, որոնք թողարկվում են միայն արտասահմանում և թանկ արժեն: Բրայլյան համակարգը պարունակում է շուրջ 2000 նշան և ավելի մեծ ծավալ են առաջացնում ֆիզիկայի, քիմիայի, մաթեմաթիկայի, երկրաչափության դասագրքերում: Երբեմն դպրոցը գտնում է առանձին անհատներ և կազմակերպություններ, որոնք կարողանում են հոգալ բրայլյան մի քանի դասագրը-քերի ծախսերը:

Շատերն են թյուր կարծիք հայտնում, որ կարելի է դասագրքերը չտեսնողների համար ձայնագրել, որն ավելի քիչ ծախսատար կլինի: Բայց մեր դպրոցի մանկա-վարժները, սովորողներն ու ծնողներն իրավացիորեն դեմ են դրան, որովհետև ձայ-նագրությամբ երեխան չի կարող պատշաճ ձևով սովորել ո՛չ ուղղագրություն, ո՛չ ուղղախոսություն, ո՛չ կետադրություն: Եվ հետո, ի՞նչ պետք է անի չտեսնող աշա-

կերտը հայոց լեզվի, ռուսաց լեզվի և անգլերենի դասերի ընթերցանության ժամերին: Ի վերջո նա պե՞տք է սահուն կարդալ սովորի, թե՞ ոչ:

Ահա բրայլյան դասագրքերի բացակայությունը ստիպում է ուսուցչին կիրառել հատուկ միջոցներ ու մեթոդներ, որոնք կնպաստեն երեխաների կրթության զարգացմանը:

Դպրոցի դասվարները մայրենիի ամբողջ դասագրքերն արտագրում են բրայլյան համակարգով: Կան ուսուցիչներ, որ դասերից հետո հանձնարարված նյութը թելադրում են սովորողներին, ոմանք էլ արտագրում են մասամբ: Այստեղից եզրակացությունը մեկն է՝ չտեսնող երեխաներին պետք է դասավանդեն միմիայն նրանք, ովքեր տիրապետում են գրել - կարդալու բրայլյան համակարգին:

Շնորհակալական գործ են անում այն ուսուցիչները, ովքեր հսկայական ջանքեր գործադրելով ու ժամանակ տրամադրելով փորձում են դասանյութերն արտագրել չտեսնող երեխաների համար և հասնում են լուրջ արդյունքների:

«Գոհունակությամբ աշխատելը առանց պսակի չի մնում», - ասել է հինգերորդ դարի իմաստասեր Եզնիկ Կողբացին[3] :

Պատմության դասաժամերին ես աշխատում եմ ճիշտ պլանավորել դասը և նախատատրաստել այն նյութերն ու պիտույքները, որոնք պետք է օգտագործվեն դասի ընթացքում: Կարևորում եմ օգտագործվող ուսումնական նյութերի բազմազանությունը և գրավչությունը: Կարևոր է, որ դրանք համապատասխանեն սովորողների տարիքային առանձնահատկություններին, ամենակարևորը՝ նպաստեն թեմայի ընկալմանն ու յուրացմանը:

Դիդակտիկ նյութերի շարքում կարևորվում է քարտեզների դերը:

Չտեսնող երեխան օգտվում է ուռուցիկ, գնդիկավոր պատկերներով և բրայլյան տառերով գրված քարտեզներից: Նման քարտեզների մեծագույն մասը տարիների ընթացքում շարքից դուրս են եկել: Ուստի այստեղ մեծ անելիք ունի ուսուցիչը: Ես վերցնում եմ ուսումնական քարտեզների երկրորդ օրինակները և չտեսնողների համար հաստ թղթերի վրա բրայլյան տառերով գրում և սոսնձով փակցնում եմ երկրների,

[3] նույն տեղում:

քաղաքների, լեռների, գետերի, ծովերի, լճերի պատմական կարևոր վայրերի անունները:

Քանի որ չտեսնողը կարդում է մատներով, ուստի ուսուցչի խնդիրն է նաև ամեն օր ստուգել, որ քարտեզները փոշոտ չլինեն, դրանցից օգտվեն մաքուր ձեռքերով, փոշին սրբել չոր և մաքուր շորով: Եթե չտեսնող աշակերտի ձեռքը քարտեզի վրա հանկարծ դիպչի կեղտափոշու, ապա նրա մոտ կառաջանա խոր հիասթափություն և գուցե երկար ժամանակ դժվար լինի նրա հետ քարտեզով աշխատելը: Չտեսնող աշակերտների գործնական կարողությունները զարգացնող ուսումնական կարևոր միջոց են նաև աշխատանքային տետրերը: Դրանց զուգահեռ ավելի եմ կարևորում լրացուցիչ հատուկ տետրերի դերը բրայլյան դասագրքերի բացակայության պայմաններում: Պատմության դասաժամերին և դրանից հետո ես թելադրում եմ կարևոր տարեթվերը, արքաների և պետությունների ղեկավարների անուններն ու կառավարման ժամանակահատվածները, մշակութային գործիչների անունները, նրանց ստեղծագործական բնագավառները և ստեղծագործությունների անունները:

Մեթոդների ու միջոցների բազմազանությունը պետք է հանգեցնի նրան, որ սովորողին նյութը հետաքրքիր լինի: Ինչքան հետաքրքիր լինի, այնքան սովորողը շահագրգիռ կլինի նյութը յուրացնել: Հիմնականում կիրառում եմ ավանդական մեթոդը և համագործակցային քարտեզագրման մեթոդը: Հարմար առիթի դեպքում անցկացնում եմ խաղ-մրցույթներ և բանավեճեր:

Ես լեզվի ու գրականության ուսուցիչների և դասվարների հետ ունենում եմ փոխադարձ դասալսումներ: Դասվարն իմանում է, որ ինձ հետաքրքրում է, թե ինչպես անել, որ երեխան սահուն կարդա և լինի գրքասեր: Նման երեխաների հետ աշխատելը հնարավորություն է տալիս սովորողին օգտվել սկզբնաղբյուրներից: Բանն այն է, որ բրայլյան համակարգով տպագրված կան Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ագաթանգեղոսի, Կորյունի, Եղիշեի, Եզնիկ Կողբացու աշխատությունները, ինչպես նաև առկա են գիտական և գիտահանրամատչելի գրականություն բրայլյան համակարգով: Վերջին տարիներին երկու անգամ անցկացրել եմ գրքի քննարկում: Այն հնարավորություն է տալիս զարգացնելու նաև սովորողների վերլուծական կարողությունները:

2018 թ. հոկտեմբերին «Էրեբունի-Երևան» տոնակատարությունների նախօրյակին մի խումբ աշակերտների հետ անցկացրեցի Հայկ Խաչատրյանի «Էրեբունի» պատ-

մավեպի քննարկումը: Խորհուրդ էի տվել օգտվել նաև նույն հեղինակի «Արքայապատում. Հայոց 141 թագավորները» և «Հայոց 150 թագուհիները» գրքերից և ներկայացնել Ուրարտական պետության արքաների և թագուհիների հայրենասիրության, վեհանձնության, խոհեմության օրինակները:

Ահա բերված օրնակներից մեկը.

Ռազմադաշտ մեկնած Արգիշտի III Արքային, ով գահակալել է Ք. ա. 625-620 թթ. զեկուցում են, որ ասորիները թունափոշի են ցանել մեր ճանապարհին ընկած խոտառատ դաշտում, որտեղ արածող մեր բոլոր նժույգները սատկել են: Թշնամին կարող է իր հեծելազորով հասնել մեր հետևակին և ջախջախիչ հարված հասցնել մեր զորքին: Արգիշտին առաջարկում է վերցնել իր թագի բոլոր մարգարիտներն ու գոհարները, վաճառել և նժույգներ գնել: Նա ասում է, որ ավելի լավ է թագը մնա անզարդ, քան թույլ տալ, որ ասորիները հաղթեն:

Այս դրվագն ավելի տպավորիչ դարձնելու համար ես մեջբերեցի չտեսնող բանաստեղծ Աշոտ Ղամբարյանի գրած քառյակներից մեկի հետևյալ տողերը.

Թագը զարդ չէ գլխի համար,
Գլուխն է թագը զարդարում:

Ես առաջադրանք էի տվել նաև «Էրեբունի» գրքից գրի առնել և ներկայացնել հետաքրքիր մտքեր: Քանի որ «Էրեբունի» գիրքը տպագրված կար բրայլյան համակարգով, ուստի չտեսնող երեխաները հնարավորություն ունեցան ցուցադրելու իրենց աշխատասիրությունը: Ստացվեց հրաշալի արդյունք: Ահա երեխաների ներկայացրած մեջբերումներից մի քանիսը.

Ասորական նետերը կարող են մեր սիրտը խոցել, բայց՝ ոչ մեր տաճարները: Թող մեր հաջորդները վսեմաշուք տաճարների բարձրությունից նայեն պարիսպների տակ ժանգոտված ասորական նիզակներին:

Պրկած պահենք մեր աղեղները, քանի դեռ նետեր կան աշխարհում: Բայց բրիչով կերտենք մեր փառքը:

Աշխարհում կառուցելու շատ բան կա: Աշխարհում ամեն ինչ վերջ ունի, և միայն կառուցելը չունի վերջ:

Աշխարհում քանդողները ավելի շատ են, քան կառուցողները:

Այսպիսով, սովորողները լրացուցիչ տեղեկատվություն ստացան ուրարտացիների շինարարական նվաճումների մասին:

2021 թ. նոյեմբերի 2-ին դարձյալ մի խումբ աշակերտների հետ անցկացրեցի Աշոտ Մելքոնյանի «Արարատ. հայոց անմահության խորհուրդը» գրքի քննարկումը: Գիրքը հագեցված էր հետաքրքիր փաստական տեղեկություններով: Ներկայացվեցին Մասիս և Արարատ բառերի ստուգաբանությունը, Մասիսի բարձրությունը հաղթահարելու դժվարությունները: Երեխաների համար նորություն էր, որ 4000 մետր բարձրությունից հետո Մասիսի վրա հավերժական ձյուն և մշտնջենական սառցադաշտեր են: Սովորողները լիարժեք պատկերացրեցին Մասիսի բարձրությունը հաղթահա - րելու դժվարությունների մասին: Խոսվեց Խաչատուր Աբովյանի և այլ անձանց մասին, ովքեր նվաճել կամ նվաճելու փորձեր են արել Մասիսի գագաթը: Սովորողների համար ամենաուշագրավ նորություններից մեկն այն էր, որ հաջողությամբ Մասիսի գագաթն է բարձրացել նաև հայ ժողովրդի մեծ բարեկամ, անգլիացի պետական գործիչ, իրավաբան, պատմաբան Ջեյմս Բրայսը, ով հայոց եղեռնի տարիներին իր բողոքի ձայնն էր բարձրացնում ընդդեմ հայերի կոտորածների: Շատ կարևոր է բանավեճերի անցկացումը: Այն զարգացնում է սովորողի վերլուծական միտքը: Սովորողներին բանավեճի մղելու համար ես Խ. Դադայանի «Հայերը և Բաքուն» գրքից դուրս գրեցի հետաքրքիր տվյալներ հայերի ներդրման մասին Բաքվի տնտեսական կյանքում և հարցադրում արեցի՝ արժե՞ր, որ հայերը ծաղկեցնեն Բաքուն, թե՞ ոչ: Այստեղ սովորողը պետք է խորհի ազգի և հայրենիքի ճակատագրի, նրանց հանդեպ յուրաքանչյուրիս պատասխանատվության մասին:

Շատ օգտավետ է դասերի ժամանակ դասարանը բաժանել երկու խմբի և անցկացնել խաղ- մրցույթներ: Հարցները պետք է չափազանց հետաքրքիր լինեն: Օրինակ՝ «Հայկական լեռնաշխարհը՝ հայոց հայրենիք» թեմայի հետ կապված հնչեցրել եմ այսպիսի հարց.

Հայկական լեռնաշխարհի նշված լճերից և լեռներից երեքի անուններով ունեցել ենք հայոց թագուհիներ: Նշվածներից որի՞ անունով հայոց թագուհի չենք ունեցել:

Բերված տարբերակներն են՝

ա) Սիփան, բ) Նեմրութ, գ) Վանա լիճ, դ) Ուրմիա լիճ:

Պարզվում է, որ մենք ունեցել ենք Սիփանե, Վանուհի և Ուրմիա անուններով թագուհիներ:

Սովորողներին որոշակի մակարդակի հասցնելուց հետո, շնորհաշատ աշակերտներից կազմում եմ երկու թիմ և անցկացնում պատմության թեմաներով մրցույթ-

ներ: Թիմերը բաշխում եմ հավասարազոր, յուրաքանչյուր խմբում ընդգրկվում են և՛ 12-րդ դասարանցի, և՛ 7-րդ դասարանցի աշակերտներ: Սա խթան է հանդիսանում, որ 7-րդ դասարանցիները շփվելով բարձր դասարանցիների հետ, փորձեն բարձրաց նել իրենց ինտելեկտուալ մակարդակը: Մեծ օգուտ են տալիս գրական-գեղարվեստա -կան ցերեկույթները, որոնք նվիրված են եղել հայոց գրերի ստեղծմանը, 1918 թ. մայիս- յան հերոսամարտերին, արցախյան պատերազմներին և այլն: Ուշագրավ է, որ ցան- կացած միջոցառման սցենարը գրելիս այն կազմում եմ հիմնականում չտեսնող բանա ստեղծների ստեղծագործություններից, որոնք լավ ընդունելիության են արժանանում:

## ԳԼՈՒԽ 2. ՉՏԵՍՆՈՂ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Չտեսնողների ստեղծագործությունները որպես տեսողության խնդիրներ ունե - ցող երեխաների ուսուցման լրացուցիչ խթան

Եթե տասնամյակներ առաջ մենք շեշտադրում էինք, որ չտեսնողը հասարակու- թյան լիիրավ անդամ է, հարկավոր է միայն նրա համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել, ապա այսօր չտեսնողների գիտական ու գրական ողջ հարստությունը ներ- կայացնելով, որոնք իրոք բարձրարժեք են, ամենուր կարող ենք առանց տատանվելու հայտարարել, որ շատ չտեսնողներ իրոք մնայուն արժեքներ են ստեղծել գրականու- թյան, երաժշտության ասպարեզներում, հրատարակել գիտական աշխատություններ:

Այս ամենի մասին պետք է չտեսնող աշակերտներին ու նրանց ծնողներին իրազեկել: Իրազեկումը կազմակերպում եմ մի քանի միջոցներով՝

ա. գրական-գեղարվեստական ցերեկույթներ անցկացնելով,

բ. դասի համապատասխան թեման ուսուցանելով,

գ. սովորողների հատուկ տետրերում չտեսնող ստեղծագործողների ուշագրավ մտքեր թելադրելով,

դ. գրքի քննարկումներ կազմակերպելով:

Ինչ է արվել իմ կողմից այդ ուղղություններով:

Վերջին շրջանում անցկացրել եմ գրական-գեղարվեստական ցերեկույթներ «Երբ վառվում է հոգու լույսը» թեմայով, որ նվիրված էր բրայլյան գրերի ստեղծման պատմությանը, ապա մի կարճ ժամանակ անց կազմակերպել եմ մեկ այլ ցերեկույթ նվիրված Ն. Տիգրանյանի կիսանդրու բացմանը մեր դպրոցի բակում: Այս միջոցառում- ների ընթացքում ունկընդիրները տեղեկացվեցին հետևյալի մասին.

Հին աշխարհի և միջին դարերի չտեսնող նշանավոր մարդիկ են եղել՝

Ք. ա 8-րդ դարի հույն էպոսագիր, բանաստեղծ և պատմիչ Հոմերոսը: Նրա գրչին են պատկանում «Իլիական» և «Ոդիսական» էպիկական պոեմները:

Ապպիոս Կլավդիոսը, ով ապրել և ստեղծագործել է Ք. ա 4-3 դարերում Հռոմում, լատինական արձակի մեզ հայտնի առաջին հեղինակներից է, նաև լատինական ասույթների ժողովածուի հեղինակ:

Ռուդաքին (860-941 թթ.) պարսկալեզու պոեզիայի հիմնադիրն է:

Անգլիացի հումանիստ և բանաստեղծ Ջոն Միլտոնը (1608-1674թթ.) տեսողությունը կորցնելուց հետո գրել է իր լավագույն գործերից մեկը՝ «Դրախտ կորուսյալ» մեծածավալ քերթվածը:

Այս անուններն այդքան երկար ժամանակահատվածի համար բնականաբար շատ չեն: Եվ այն ուներ իր օբյեկտիվ պատճառները:

Ավատատիրական հասարակարգում չտեսնողներին չէին ներգրավում որևէ ոլորտի մեջ: Ավատատերերն ազատություն էին տալիս չտեսնող ճորտերին՝ իրենցից հեռացնելով ձրիակերներ պահելու բեռը: Իսկ կաթոլիկ եկեղեցին հիմնավորում էր այն, քարոզելով, թե չտեսնողը աստծու կողմից դատապարտված մարդ է, հետևապես աստծո անունով պետք է հայթայթի օրվա ապրուստը:

Հետևապես խոսք չկար չտեսնողների կրթության մասին:

Չտեսնողների համար առաջին դպրոցը բացվել է 1784 թ. Փարիզում, ֆրանսիացի մեծ մանկավարժ Վալենտին Գայուիի (1745-1822) կողմից: Գայուին ինքը չտեսնող չէր, բայց սրտացավորեն էր մտահոգվում չտեսնողների ճակատագրով:

Գայուին փորձեց ստեղծել չտեսնողների գրել- կարդալու համակարգ, սակայն այն լիարժեք չէր: Դրանով դժվար էր կարդալը, գրելը, անհնար էր սխալներն ուղղելը, հնարավոր չէր այն կիրառել մաթեմաթիկայում, ֆիզիկայում, քիմիայում, նոտագրության մեջ: Չտեսնողների համար գրային կատարյալ համակարգ ստեղծեց ֆրանսիացի տաղանդավոր հասարակական գործիչ Լուի Բրայլը (1809-1852թթ.):

Լուի Բրայլը 3 տարեկան հասակում հոր արհեստանոցում խաղալիս, աչքը վնասում է թամբագործի դանակով և կուրանում: Այն ուսումնական հաստատությունը, որտեղ սովորում էր Լուի Բրայլը, գտնվում էր չափազանց փոքր ու խոնավ մի շենքում: Աշակերտներն աշխատելով դպրոցի արհեստանոցում, հոգում էին նրա գոյատևման համար անհրաժեշտ եկամուտի մի մասը: Սուղ միջոցների պատճառով աշակերտները հայտնվել էին ծայրահեղ կարիքի մեջ: Նրանց անվերջ հետապնդում էին կիսաքաղց վիճակը, հիվանդություններն ու մահը: Այդ խոնավ ու ցուրտ շենքում վխտում էին միջատները: Սանդուխքները դժվարամատչելի էին չտեսնողների համար: Արհեստանոցները տեղավորված էին միջանցքներում, որը խիստ դժվարաց -նում էր անցուդարձը: Սմքած ձեռքեր, գունատ դեմքեր: Եվ պատահական չէր, որ 26 տարեկանում Լուի Բրայլը հիվանդացավ թոքախտով, որը հետագայում նրա մահվան պատճառ դարձավ:

1829 թ. Լուի Բրայլը, ով ընդամենը 20 տարեկան էր, ստեղծեց չտեսնողների գրության համակարգ, որն իր անունով կոչվեց բրայլյան համակարգ: Ստեղծեց նաև հատուկ գրասարք:

Այսօր բոլոր չտեսնողները, անկախ ազգությունից գրում, կարդում են բրայլյան համակարգով, որն իր հաղթական ուղին անցավ ոչ թե հատուկ օրենսդրությամբ, այլ շնորհիվ նրա, որ այդ համակարգի հիմքում ընկած է վեցկետիկային կայուն կառուցվածք, որն ունի իր անխախտ օրենքները: Այս համակարգով լիարժեք կարող են ուսուցանել լեզուներ, մաթեմատիկա, երկրաչափություն, ֆիզիկա, քիմիա, նոտագրություն և, որ շատ եմ կարևորում, կարող են սահուն կարդալ և արագ գրել:

Բրայլը նաև հիանալի երաժիշտ էր: Փարիզի եկեղեցիներից մեկի երգեհոնահարն էր և հաճախ էր հանդես գալիս մենահամերգներով: Նա ընտանիք չուներ: Այնքան վեհանձն մարդ էր, որ եկեղեցու երգեհոնահարի տեղը զիջեց մեծ ընտանիք ունեցող մի չտեսնողի, իսկ ինքը կյանքի վերջին տարիներն անցկացրեց աղքատության մեջ:

Ի՞նչպիսին էր չտեսնողների վիճակը Հայաստանում:

Հայաստանում մուտք չէր գործել բրայլյան համակարգը, չտեսնողների համար չկային կրթության և գործունեության պայմաններ: Հայ չտեսնողներին հուսահատ այդ վիճակից դուրս բերելու անգնահատելի գործն ստանձնեց և պատվով կատարեց անվանի երգահան Նիկողայոս Տիգրանյանը (1856-1951թթ.): 1921 թ. Ալեքսանդրապոլում (այժմ Գյումրի) մերձավոր արևելքի ամերիկյան կոմիտեի (Ամերկոմ) կողմից բացվեց որբանոց: Ն. Տիգրանյանն այդ որբանոցի շենքում 1922 թ. դպրոց բացեց չտեսնող երեխաների համար, որտեղ հիմնականում ընդուվեցին հայոց մեծ եղեռնից մի կերպ փրկված, բայց ծնողներին ու ազգականներին կորցրած չտեսնող որբեր: 1922 թ. հուլիսի 3-ին բացվեց այդ դպրոցը, որտեղ ընդունվեց 80 երեխա՝ 44 տղա և 36 աղջիկ: Ն. Տիգրանյանը ստեղծեց բրայլյան համակարգի հայերեն տարբերակը և սկսեց ուսուցանել իր սաներին, ըստ էության հանդիսանալով հայ առաջին տիֆլոմանկավարժը:

Ն. Տիգրանյանն անվանի երգահան է, բանահավաք, դաշնակահար, երաժշտական և հասարակական գործիչ: Տիգրանյանը նաև հայ պրոֆեսիոնալ երաժշտության հիմնադիրներից մեկն է, արևելքի ժողովուրդների երաժշտության մեծ գիտակ: Նա եվրոպական նոտագրության վերածեց արևելյան ժողովուրդների երաժշտական շատ գործեր, հայկական ժողովրդական երգեր, պարեր ու մեղեդիներ:

Անվանի երգահանը 1933 թ. արժանացել է հանրապետության ժողովրդական արտիստի, իսկ 1936 թ. սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Չորս տարի Ն. Տիգրանյանը բրայլյան գրերն էր սովորեցնում իր հիմնադրած դպրոցում: Դասավանդում էր նաև երաժշտական առարկաներ:

Ցավոք, 1926 թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ Լենինականի սոսկալի երկրաշարժը: Դրա հետևանքով դադարեցվեց Ամերկոմի գործունեությունը, որ հոգում էր նաև դպրոցի ծախսերը, փակվեց Ն. Տիգրանյանի հիմնադրած դպրոցը:

Դպրոցի սաները տեղավորվեցին Ստեփանավանում գտնվող հաշվանդամների տանը, որն ընդամենը մի անհրապույր կացարան էր, ուրիշ ոչինչ: Չդիմանալով այս պայմաններին, նախկին դպրոցի սաների մեծ մասը խմբերով կամ առանձին-առանձին լքում էին հաշմանդամների տունը:

Որևէ հեռանկարի հույս չունենալով, նրանց մի մասը հեռացան Ռուսաստան՝ կտրվելով մայր հողից:

Բայց Ն. Տիգրանյանի սաներն էին, որ 1930 թ. հիմնեցին Հայաստանի կույրերի միավորումը, իսկ 1939 թ.՝ կույր երեխաների դպրոցը Երևանում, որ գործում է մինչ օրս և կրում է Ն. Տիգրանյանի անունը, անվանվելով Երևանի Ն. Տիգրանյանի անվան ՏԽՈՒԵ թիվ 14 հատուկ դպրոց:

Իր գործունեության ընթացում այս դպրոցը տվել է գիտության 4 դոկտորներ, բանաստեղծներ, թարգմանիչներ, երգահաններ:

Այժմ ներկայացնում եմ դասերի այն փուլերը, երբ փորձում եմ դասերի թեմա - ները համեմել չտեսնողների ստեղծագործություններով ու գիտական աշխատություն - ներով: Դրանից իրոք հոգեկան հաճույք եմ զգում և կարծես նորամուծություն լինի չտեսնող երեխաներին դասավանդելիս: Մեր դպրոցի սանն է բանասիրական գիտու- թյունների դոկտոր, գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ Ալբերտ Մուշեղյանը (ծնվ. 1931 թ.): Ա. Մուշեղյանը տիրապետում է ինը լեզուների՝ հայերեն, գրաբար, ռու- սերեն, գերմաներեն, անգլերեն, հունարեն, լատիներեն, բաբելոներեն, ասորերեն: Նա ոչ միայն տիրապետում է այդ լեզուներին, այլև կատարում է բնագրային այնպիսի հա- մեմատություններ, որ ապշեցնում է շատերին: Հայագիտության այս նվիրյալը գիտա- կան աշխարհին հայտնի է որպես մեծ Խորենացիագետ: Ինչո՞ւ Խորենացիագետ:

Ֆինանսական միջոցներ ստանալով թուրքերից և ադրբեջանցիներից, եվրոպա - ցի մի շարք գիտնականներ փորձում են խեղաթյուրել մեր պատմության շատ իրողու-

թյուններ: Գերմանացի Ալֆրեդ Գուտշմիդը, անգլիացի Ռոբերտ Թոմսոնը և ուրիշներ փորձելով արժեզրկել Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», գրում են, որ Մ. Խորենացին օգտագործել է այնպիսի տեղանուններ, ճակատամարտերի վայրեր, որոնք գործածվել են 7-8-րդ դարերում: Հետևաբար նրանք Մ. Խորենացուն փորձում են ներկայացնել իբրև 8-րդ դարի երկրորդ կեսին ապրած մի վանական, որն իր հերյուրած պատմության հանդեպ ընթերցողներին հավատ և վստահություն ներշնչելու համար ծպտվել է 5-րդ դարից հայտնի Մովսես փիլիսոփայի ու թարգմանչի դիմակով և ներկայանում է Սահակի ու Մեսրոպի աշակերտ[4]:

Սա նշանակում է գլխի վայր շուռ տալ մեր ժողովրդի ողջ պատմությունը:

Ահա Ա. Մուշեղյանը մեկ առ մեկ հերքում է նրանց «փաստարկները» իր «Մովսես Խորենացու դարը» կոթողային աշխատությունում: Ընդ որում իր փաստարկները հիմնավորելու համար նա հիմնականում մատնանշում է օտար աղբյուրներ, որպեսզի իր խոսքն ավելի համոզիչ դարձնի եվրոպացի հետազոտողների համար:

Եվ այսպես նա Մովսես Խորենացուն բերեց բազմեցրեց իր իրական և պատվավոր տեղը՝ 5-րդ դար:

Հայոց եղեռնի, հայ-թուրքական պատերազմների թեմաներն անցնելիս ներկայացնում եմ Ա. Մուշեղյանի «Իգդիրի արագիրլները» բանաստեղծությունը և «Կարսի անկումը» պոեմը: Չգիտեմ ինչքանով է հարմար հետազոտական այս աշխատանքում օգտագործել չափածո մեջբերումներ, բայց առանց դրանց նշանակում է ոչինչ չասել: Ուստի նպատակահարմար եմ գտնում մի քանի սեղմ մեջբերումներ կատարել:

Ներկայացնում եմ «Իգդիրի արագիրլները» բանաստեղծության երկրորդ քառատողը և վերջին երկու քառատողերը.

.... Երբ ճայթեցին հրանոթ ու հրացան,
Հին Իգդիրի բարդիներից դարավոր,
Թևին տվին, հայերի հետ հեռացան
Հավատարիմ արագիլները բոլոր:
.... Ու մինչ օրս բարդիներին երկնաքեր
Դեռ մնում են հին բները խարխլված.

[4] Ա. Մուշեղյան. «Մովսես Խորենացու դարը»: Երևան, 2007 թ., էջ 13

Որտե՞ղ ես դու պատսպարում քո ձագեր,
Որ չես դառնում քո Իգդիրը ա՜խ խլված:
Ու հայրենի բնից եղած դատարկուն՝
Ո՞ր ժայռին ես սրում կտուց ու մագիլ.
Օ՜ձն է նստել բախտիս վրա ահարկու
Ո՞րտեղ ես դու, վիշապաքաղ արագիլ:

«Կարսի անկումը» պոեմում այսպես է նկարագրում հայի զգացողությունը, վիշտը հայկական հողերը թշնամուն անցնելուց հետո (քառատողերը բերում եմ պոեմի տարբեր մասերից, ուստի իրարից անջատում եմ աստղանիշերով):

Եվ Նաիրին կորավ մուժում անթափանց,
Ու հնամյա քաղաքներում, շեներում,
Վխտում էին բորենիներ հաղթապանծ,
Որոնք զոհին փուչ պատրանքներ չեն ներում:

***

Թե մոռանաս, ինչեր գլխով մեր անցան,
Բնօրրանիդ հուշն ու հույսը թե մարես,
Մի բուռ ազգն էլ վերջը կանես ցիրուցան,
Այս ափ հողն էլ մի օր միֆ կհամարես:

Ա. Մուշեղյանը գերմաներենից հայերեն է թարգմանել Հայնեի և Գյոթեի բանաստեղծությունները, որոնք հրատարակվել են առանձին գրքերով: Գերմաներենից հայերեն է թարգմանել նաև գերմանացի բանաստեղծ, իրավագիտության դոկտոր Արմին Վեգների «Ճանապարհ առանց տունդարձի» գիրքը, որում հեղինակը ականատեսի աչքերով ներկայացնում է Միջագետքի անապատներում դեգերող հայ տեղահանվածների ողբերգական վիճակը: Գրքում զետեղված նամակներում և օրագրային նոթերում պատկերել է երիտթուրքերի կազմակերպած հայերի սպանդը:

Մեր դպրոցի շրջանավարտ է բանաստեղծ Աշոտ Ղամբարյանը (Աշոտ Ջահակիր, ծնված 1953 թ.): Նա հրատարակել է բանաստեղծությունների և պոեմների 3 ժողովածուներ: Շատ ուշագրավ է առանձին գրքով հրատարակված « Հայապատում » պոեմը, որում 2000 չափածո տողերով ներկայացված է հայոց պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, մինչև 1992 թ. Շուշիի ազատագրումը: Դա իրոք կարող է հայոց պատ-

մության օժանդակ ձեռնարկի դեր կատարել: Արդեն խոսուն են առանձին գլուխների վերնագրերը՝ «Հայկ և Բել», «Արգիշտի, Էրեբունիի կառուցումը», «Արտաշես 1-ին», «Տիգրան Մեծ», «Արշակունիներ», «Քրիստոնեության ընդունումը», «Մեսրոպ Մաշտոց և հայոց գրերի ստեղծումը», «Վարդանանց պատերազմ», «Բագրատունիներ», «Կիլիկ-յան Հայաստան», «Դավիթ Բեկ և Մխիթար սպարապետ», «Ֆիդայական շարժում», «Մայիսյան հերոսամարտեր» և այլն:

Սրանցից յուրաքանչյուրն առանձին թեմայի լրացուցիչ նյութ է:

Սա իրոք նվեր է հայ ուսուցչին և աշակերտներին: Հայաստանի գիտություն-ների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկ-տոր, պրոֆեսոր Արտեմ Սարգսյանը այս պոեմի մասին գրել է. «Այս ստեղծագործու-թյունն իր ուրույն և արժանի տեղը կգրավի գրական- գեղարվեստական, պատմահայ - բենասիրական ստեղծագործությունների շարքում»[5]:

2022 թ. սեպտեմբերի 8-ին անցկացրեցի արցախյան 44 օրյա պատերազմի զոհե-րի հիշատակին նվիրված ցերեկույթ: Այն եզրափակվեց Աշոտ Ջահակիրի հետևյալ տողերով.

Թեկուզ ճյուղերս էլ կտրեք, թողնեք բունըս դատարկ,
Գայլերի պես ոռնաք, բուերի պես վայեք,
Կբողբոջեմ նորից հայոց արևի տակ
Ու կհառնեմ ձեր դեմ, լավ իմացեք, հայ եմ:

Այս պահին մեզ հայտնի է չտեսնող 49 հայ աշուղների անուն և նրանց որոշ ստեղծագործություններ: Նրանցից 3-ի՝ Հավասու, Շիրինի և Ֆահրատի ստեղծագոր - ծությունների լիակատար ժողովածուները հրատարակված են:

Քչերը գիտեն, որ հանրահայտ «Զարթի՛ր լաո» երգի հեղինակը չտեսնող աշուղ է՝ Ֆահրատը (1867-1921 թթ.): Երգը նվիրված է հայ առաջին հայդուկապետ Արաբոյին, ով զոհվել է 1893 թ. : Երգը ստեղծվել է ավանդական օրորների նմանությամբ, միայն հակառակ նպատակադրմամբ՝ արթնացնել, ոտքի հանել Լաոյին, զենքի կոչել[6]:

Ֆահրատի գրչին է պատկանում «Հայրենասերի կոչը» երգը.

---

[5] Աշոտ Ջահակիր. «Հայապատում»: Լոս Անգելես, 2015 թ., էջ 5,

[6] Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր: Երևան, 1989 թ., էջ 34

Ով որ քաջ է, ի՞նչ կսպասե,
Արդեն ժամանակն է, թող գա,
Մահ-պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է, թող գա: (և այլն)

Անշուշտ, այս աշխատանքի ծավալը թույլ չի տալիս մանրամասնորեն խոսել բոլորի մասին: Ուստի բավարարվենք չտեսնող նշանավոր մարդկանց մի մասի անուն ները միայն հրապարակելով.

Գրողներ Խորխե Լուիս Բորխես, Նիկոլայ Օստրովսկի, Ծերուն Թորգոմյան:

Բանաստեղծներ Վրեժ Վարդունի, Սարգիս Խարազյան, Ռուբեն Հովսեփյան, Էդուարդ Ասադով, Էդվարդ Միրզոյան, Ռոստոմ Դարբինյան:

Մաթեմատիկոսներ՝ հռչակավոր պրոֆեսոր Նիկոլայ Լոբաչևսկի, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Էդվարդ Միրզախանյան, մեր դպրոցի շրջանավարտ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Յուրա Բալագոզյան:

Գիտության և արվեստի ասպարեզներում իրենց խոսքն են ասել մեր դպրոցի շրջանավարտներ՝ գիտության դոկտորներ լեզվաբան Երջանիկ Գևորգյանը, մանուալ թերապևտ Սեյրան Ստեփանյանը, ինչպես նաև երգահան Սիմոն Հովհաննիսյանը:

Չտեսնող նշանավոր երգիչներից նշենք հետևյալ անունները՝

ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Արթուր Այդինյան, Ադրիան Բոչելի, Ռեյ Չարլզ, Սթիվի Ուանդեր, Դիանա Գուրցկայա և ուրիշներ:

Հատուկ տետրերում գրել եմ տալիս չտեսնող նշանավոր մարդկանց ասույթ-ները, աֆորիզմները և ուշագրավ մտքերը: Օրինակ՝

Մոր ձեռքից բռնած նա հասակ առավ,
Մոր ձեռքը բռնած ծերանոց տարավ:
Վրեժ Վարդունի

Ղարաբաղ կոչեց ճոխ այգին հայի,
Որտեղ մտնում էր, սիրում էր խանձել,
Հիշիր Եվրոպա, խոսքը Հյուգոյի,
Այստեղով միայն թուրքերն են անցել:
Ալբերտ Մուշեղյան

Գիտելիքը զրահ է բոլոր դժբախտությունների դեմ:

Ռուդաքի

Մեկ թշնամին շատ է, հազար բարեկամը՝ քիչ:

Ռուդաքի

Այսպիսով, եթե հանրագումարի բերենք մեր ասելիքը, ապա հետևողական աշ - խատանքի արդյունքում մենք պետք է ձգտենք նրան, որ դպրոցից դուրս գան պատմա- կան գիտելիքներով զինված, ազգային ինքնագիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, ազգային նկարագիր ունեցող հայ մարդ ու քաղաքացի:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անշուշտ, իմ մանկավարժական գործունեության ընթացքում ձգտել եմ նրան, որ չտեսնողը ստանա լիարժեք կրթություն, լինի բանիմաց, գիտելիքներով զինված, ունենա վերլուծական կարողություններ և իրեն զգա հասարակության լիիրավ անդամ:

Մինչև 21-րդ դարը չտեսնող երեխաների համար անհասանելի էին հանրապետական համադպրոցական միջոցառումները:

Նկատելով իմ աշակերտներից մի քանիսի պոտենցիալ հնարավորությունները, հասանք նրան, որ կոտրվեց հնացած կարծրատիպը չտեսնողների մասին և արդյունքում մեր աշակերտները՝ չտեսնողները, 2001-2002 ուսումնական տարում առաջին անգամ մասնակցեցին դպրոցականների առարկայական օլիմպիադային պատմությունից և բոլոր 3 փուլերում ցույց տվեցին ապշեցուցիչ արդյունքներ: Այդ մասին գրվեց «Կրթություն» թերթի 2002թ.-ի 4-րդ համարում: Ընդ որում, ամենաբարձր արդյունքները ցույց էր տալիս Արտակ Բեգլարյանը, ով այժմ Արցախի Հանրապետության պետնախարարն է:

Հասել ենք նրան, որ շատացել են ընթերցասեր աշակերտները: Նրանցից ոմանք հաջողությունների են հասել մի շարք հեռուստանախագծերում, որոնցում հնչեցված հարցերի մեծ մասը պատմությունից են: Տարեցտարի ավելանում են մեր դպրոցի շրջանավարտների բուհ ընդունվողների թիվը: Խրախուսվելով չտեսնող մարդկանց հաջողություններով, մեր դպրոցի սովորողներն այժմ դարձել են ավելի վստահ ու շրջահայաց: Հավատով են նայում ապագային: 20-րդ դարի ճանաչված հոգեբան-մանկավարժ Ավգուստ Կրոգիուսը գրել է. «Չտեսնողների ծարավը՝ ապրելու մարդկային գիտակցված կյանքով, ուժեղ է, գուցե նույնիսկ ավելի ուժեղ, քան նրանց շրջապատող այլ մարդկանց մեջ: Եթե չտեսնողին հնարավորություն տրվի սովորելու, նա կարող է ընկալել մարդկային մտքի նվաճումների ամենախորն ու ամենագեղեցիկը»:

Այսպիսով, եթե ընդհանուր եզրակացության հանգենք, չտեսնող երեխաների հետ աշխատանքը համբերատար, յուրահատուկ մոտեցմամբ, ըմբռնում պահանջող, բայց չտեսնող աշակերտին լիարժեք կյանքով ապրելուն նախապատրաստող բարդ, բայց և օգտաշատ աշխատանք է: Եվ հաջողությունը կախված է և՛ ուսուցչի բարեխղճությունից, և՛ աշակերտի կամային որակներից ու աշխատասիրությունից:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ազարյան Ռոբերտ, «Նիկողայոս Տիգրանյան», Երևան, 2009 թ.:
2. Դաղայան Խաչատուր, «Հայերը և Բաքուն», Երևան, 2006 թ.:
3. Խաչատրյան Հայկ, «Արքայապատում. Հայոց 141 թագավորները», Եր.,1998 թ.:
4. Խաչատրյան Հայկ, «Էրեբունի», Երևան, 1980 թ.:
5. Խաչատրյան Հայկ, «Հայոց 150 թագուհիները», Երևան, 1998 թ.:
6. Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Երևան, 1989 թ.:
7. Ղամբարյան Աշոտ, «Հայապատում», Լոս Անջելես, 2015 թ.:
8. Մելքոնյան Աշոտ,«Արարատ. Հայոց անմահության խորհուրդը», Եր., 2007 թ.:
9. Մինասյան Արսեն, «Ուսումնադաստիարակչական աշխատանքը տեսողության խանգարումներ ունեցող երեխաների դպրոցներում», Երևան, 1983 թ.:
10. Մինասյան Հարություն, «Լավ է կույր աչոք, քան կույր մտոք», Երևան, 2012 թ.:
11. Միքայելյան Ալբերտ, Մարդումյան Միքայել, «Մտքի հրավառություն», Երևան, 2012 թ.:
12. Մուշեղյան Ալբերտ, «Մովսես Խորենացու դարը», Երևան, 2007 թ.:
13. Վորոնցով Վլադիմիր, «Բանականության սիմֆոնիա», Երևան, 1978 թ.:
14. Տիգրանյան Նիկողայոս, «Հուշեր, հոդվածներ, նամակներ», Երևան, 1981 թ.